ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 43/14

22-ը փետրվարի 2020 թվականի

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2017 թ. դեկտեմբերի 26-ի թիվ 28 նիստում հաստատված ԵՊՀ ԻՄ ներքին կարգապահական կանոնների մեջ փոփոխություններ կատարելու մասին:

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2017 թ. դեկտեմբերի 26-ի թիվ 28 նիստում հաստատված ԵՊՀ ԻՄ ներքին կարգապահական կանոնների մեջ, 34, 35 և 36-րդ կետերում կատարել հետևյալ փոփոխությունները.

Ա) Կանոնների 34-րդ կետի 1-ին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«Մասնաճյուղում ուսումնական գործընթացը կազմակերպվում է շաբաթվա 5 օրերի ընթացքում, իսկ կախված աշխատանքային անհրաժեշտությունից որոշ ստորաբաժանումների և առանձին աշխատակիցների համար՝ տնօրենի

թույլտվությամբ կարող է փոփոխվել աշխատանքային շաբաթվա տևողությունը, պահպանելով շաբաթական ծանրաբեռնվածությունը:»

Բ) Կանոնների 35–րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«ԵՊՀ ԻՄ պրոֆեսորադասախոսական համակազմի/ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ, դասախոս/ աշխատողների համար սահմանվում է հնգօրյա աշխատանքային շաբաթ 32 ժամ ընդհանուր տևողությամբ: ԵՊՀ ԻՄ մյուս աշխատողների համար սահմանվում է հնգօրյա աշխատանքային շաբաթ 36 ժամ ընդհանուր տևողությամբ:»

Գ) Կանոնների 36–րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«ԵՊՀ ԻՄ-ում աշխատաժամանակը սահմանվում է 9:00-ից 19:00-ի սահմաններում: Ընդմիջումը սահմանվում է 13:00-ից 13:30-ն ընկած ժամանակահատվածում: Աշխատանքի բնույթից ելնելով յուրաքանչյուր ստորաբաժանում կարող է փոփոխել ընդմիջման ժամը:

Աշխատանքային անհրաժեշտությունով պայմանավորված որոշ ստորաբաժանումների և առանձին աշխատակիցների համար՝ տնօրենի թույլտվությամբ կարող է փոփոխվել աշխատանքային ժամերը 9:00-ից 19:00-ի սահմաններում՝ պահպանելով օրվա ծանրաբեռնվածությունը»

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ԻՄ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ